ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը

Հետազոտող ուսուցիչներ՝ Նադյա Սիմոնյան

Ա. Մանուկյանի անվան թիվ 93դպրոց

Լիլիթ Հունանյան

153 հիմանական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը.....4

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլի առանձնահատկությունները 5

Հայոց ցեղասպանության թեմայի դասավանդման որոշ կարևոր շեշտադրումներ.....10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության առնչվող իրավական հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը հայ իրականության առջև ծառացած ամենալուրջ մարտահրավերներից մեկն է:

Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցից հետո առավել պարտավորեցնող դարձավ այդ հանցագործության համար իրավական պատասխանատվության հնարավոր եղանակների համակողմանի, օբյեկտիվ և ամբողջական ուսումնասիրությունը: Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների հաղթահարման հիմնահարցերը բարձրացվեցին պետական քաղաքականության մակարդակի ձեռք բերելով նոր որակ և բովանդակություն:

Ցեղասպանության իրողությունը հայկական հավաքական հիշողության կայուն բաղադրիչներից է: Սա հիշողության այն ձևերից է, երբ անցյալն ինչ-որ բան է առաջարկում ներկային և որոշակիորեն պայմանավորում է հիշողություն կրող խմբի մի մասի վարքագիծը: Կայուն հիշողությունները ստեղծում են կապեր ողջերի և պատմության միջև:

Օսմանյան կառավարության կողմից իրականացրած Հայոց ցեղասպանության փաստը հիմնավորվել, ճանաչվել ու հաստատվել է ականատեսների վկայություններով, օրենքներով, բանաձևերով ու բազմաթիվ նահանգների ու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների որոշումներով:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը

20-րդ դարի առաջին ցեղասպանության՝ Հայոց մեծ եղեռնի դատապարտմամբ հանդես եկան ժամանակի առանձին պետություններ, առաջադեմ հասարակական-քաղաքական ու պետական նշանավոր գործիչներ ու մտավորականներ: Ցեղասպանության միջազգային ճանաչման առաջին ու կարևոր փաստաթղթերից է 1915թ. մայիսի 24-ին Անտանտի երկրների՝ Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների միացյալ հայտարարությունը, որով արևմտահայության կոտորածը բնութագրվում էին որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված ոճրագործություն, որի համար «…անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական այլ իշխանությունների վրա, որոնք մասնակից են դարձել նման կոտորածին»: Ժամանակակից Թուրքիան ցեղասպանությունը վերապրած հայերի ժառանգներին արգելում վերադառնալ իրենց պատմական հայրենիքը, մերժում է սեփականությունը վերադարձնելու կամ պատճառված վնասի փոխհատուցում ստանալու նրանց իրավունքը:

Միջազգային իրավունքը ցեղասպանության հանցագործության հետ է կապում նաև նյութական պատասխանատվությունը՝ որպես ունեցվածքի վերադարձում և սեփականության վերականգնում: 1985թ. դեկտեմբերին Ֆրանսիայում ստեղծվեց «Հայերի ցեղասպանության ճանաչման ֆրանսիական կոմիտե» հասարակական կազմակերպությունը, որի կազմում ընդգրկվեցին նացիզմի ու ֆաշիզմի դեմ պայքարած, մահվան ճամբարներն անցած նախկին դիմադրողականները ու խաղաղության պաշտպանները:

1985թ. ապրիլի 23-ին Արգենտինայի Ազգային կոնգրեսը որոշում ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը 1989թ. մայիսի համաժողովում ընդունեց բանաձև հայերի ցեղասպանության մասին և ճանաչեց սփյուռքահայերի՝ հայրենիք վերադառնալու իրավունքը:

Ինչ վերաբերում է Խորհրդային Հայաստանին, ապա Մոսկվայի պարտադրանքով 70 տարի շարունակ հարկադրաբար մոռացության մատնվեց ցեղասպանության ճանաչման հարցը[1]:

1990թ. օգոստոսի 23-ի ՀԽՍՀ ԳԽ-ի առաջին նստաշրջանում ընդունված «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթում հատուկ կետ մտցվեց 1915թ. հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ: Հայաստանի անկախության հռչակումով սկվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դրա հետևանքների հաղթահարման նոր փուլ:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլի առանձնահատկությունները

Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլը սկսվեց 1998թ. ՀՀ իշխանափոխությունից հետո, երբ այն դարձավ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը: Եթե մինչև Հայաստանի անկախությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել էին ընդամենը մի քանի երկրներ ու միջազգային կազմակերպություններ, ապա 1990-ական թթ. դրանց դրանց թիվն ավելացավ: Ռուսաստանը, Կանադան, Կիպրոսը, Հունաստանը, Բելգիան, Լիբանանը, Արգենտինան և այլն, իրենց խորհրդարանների որոշումներով ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը:

1998թ. ապրիլի 24-ին Եվրախորհրդարանի խորհրդարանական վեհաժողովը Հայոց ցեղասպանությունը համարեց 20 դարի առաջին ցեղասպանություն: 2000թ. նոյեմբերի 10-ին Վատիկանն իր հայտարարության մեջ Հայոց ցեղասպանությունը համարեց 20-րդ դարի հետագա բոլոր ցեղասպանությունների սկիզբը:

2000-ական թթ. նման որոշումներ կայացրել են Ֆրանսիան (29 հունվարի 2001թ. օրենք): Գերմանիան (խորհրդարանի բանաձև՝ 15 հունիսի 2005թ.), Արգենտինան (2004թ. մարտի 14-ի և 2007թ. հունվարի 15-ի օրենքներ), Կանադան (Սենատի 2002 թվականի հունիսի 13-ի բանաձև և Համայնքների պալատի 2004թ. ապրիլի 21-ի բանաձև) և այլ երկրներ: Այս փուլի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ

[1] Հայոց Պատմություն, Հատոր IV, Գիրք Երկրորդ:

հատկապես մինչև 2004թ. Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում նկատվում էր տվյալ երկրում հայկական համայնքի ազդեցության հանգամանքը:

2015թ. մարտի 3-ին Եվրոպական ժողովրդական կուսակցության քաղաքական համաժողովը ընդունել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև՝ «Հայոց ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» վերնագրով, որտեղ վերահաստատել է Հայոց ցեղասպանության և հայ ժողովրդի բռնի տեղահանման փաստը և դատապարտել այն: Բանաձևում ուղղակիորեն նշված է, որ «ԵԺԿ-ն դատապարտում է հայ ժողովրդի հանդեպ ցեղասպանության գործողությունները, որոնք ծրագրվել և մշտապես չարակամորեն իրականացվել է Օսմանյան կայսրության և Թուրքիայի այլ ռեժիմների կողմից 1894-1924թթ.: Բանաձևը կոչ է անում Թուրքիային՝ «…հետևել հետպատերազմական Գերմանիայի կողմից ցուցաբերված բացառիկ շիտակության ու նախաձեռնողականության օրինակին, պատմությունը ընդունելուն և Հայոց ցեղասպանության և դրան հետևող ուներզրկման ներկայիս իրականությունը ճանաչելուն, ինչպես նաև նյութական և բարոյական հատուցումն ապահովելուն՝ իրականացնելով եվրոպական երկրին վայել քաղաքականությունը, որը ներառում էր պատմական հողերի վերադարձը հայ բնակչությանը, հայ ընտանիքների վերամիավորումից իրենց ազգային օջախներին վերադառնալու և դրանից բխող ճշմարտությանը հասնելու հրամայականի իրագործմանը»:

Հայոց ցեղասպանության ժխտման ու քողարկման նոր դրսևորում պետք է համարել 2014թ. ապրիլի 23-ին Հայոց ցեղասպանության տարելիցի առնչությամբ Թուրքիայի վարչապետ (այժմ՝ նախագահ) Ռեջեփ Թայիբ Էրդողանի հայտարարությունը: Նա կիրառելով թուրքական քարոզչության մեքենայի բոլորին հայտնի թեզերը՝ զոհին ու դահիճին նույն հարթության մեջ դնելը, պատճառահետևանքային կապի խեղաթյուրումը, «պատմական իրականության վերանայման» կոչը, «խոսքի ազատության և պատմության մեջ բազմակարծությունը հարգելու կարևորությունը», Հայոց ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով «1915թ. պատահած միջադեպը» համարելը և «ընդհանուր ցավ» ներկայացնելը, Թուրքիայի անունից «հայերի թոռներին ցավակցություն հայտնելը», որոնց ծնողները ոչ թե սպանվել են թուրք և քուրդ ոճրագործերի կողմից,

այլ «մահացել են 20-րդ դարի սկզբին» փորձում է շարունակել ժխտողական քաղաքականությունը, վերափաթեթավորել ուրացումը, խուսափել Հայոց ցեղասպանության համար պատասխանատվությունից, այդ դեռևս չպատժված ոճիրը իջեցնելով սովորական չլուծված երկկողմ հակամարտության մակարդակի, որը չի կարող դիմանալ ոչ պատմական փաստարկներին, ոչ էլ միջազգային իրավունքի կամ բարոյական քննությանը[2]:

Ցեղասպանությունն իրականացնողների կամ նրանց ժառանգների կողմից ժխտողականության ալիքն ամենամեծ հարվածն է վերապրածների համար:

Ինչպես իրավացիորեն ասել է Հոլոքոստ վերապրած Նոբելյան մրցանակակիր Էլի Վիզելը. «Ժխտել – նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»:

Այսօր աշխարհը ճանարում և դատապարտում է այդ ոճիրը, սակայն մեզ համար չափազանց կարևոր է Թուրքիայի կողմից ճանաչումը և սեփական պատմությանն առերեսվելը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը ցույց տվեց, որ հայ-թուրքական հաշտեցումը վերևից չի գալիս:

Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից բացահայտ ժխտողականության արտահայտություն էր նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան հրավերին՝ ներկա գտնվելու Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, ի պատասխան հակահրավեր ուղարկելը՝ նույն ժամանակում ապրիլի 24-ին, ներկա գտնվելու Դարդանելի միջոցառման 100-րդ տարելիցին՝ նշելով, որ «Գալիպոլիում կռվող հայ զինվորներ էլ կային…միասին ենք պայքար մղել» արտահայտությունը: Սա իհարկե, նպատակ ունի շեղելու աշխարհի ուշադրությունը և նվազեցնելու Մեծ եղեռնի մեկդարյա տարելիցի նշանակությունը:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել են ոչ միայն ԱՄՆ-ի 4 տասնյակից ավելի նահանգները, այլև տարբեր քաղաքների քաղաքապետարանները: Ֆրանսիայի Սենատը 2012թ. հունվարին ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացնող օրենք, թեև Սահմանադրական խորհուրդը փետրվարին այն մերժեց՝ խոսքի ազատությունը սահմանափակելու պատճառով:

[2] Է.Մինասյան, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 5:

2014թ. ապրիլի 10-ին ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 12 կողմ, 5 դեմ արդյունքով ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը դատապարտող 410 բանաձև:

Նույն տարվա սեպտեմբերի 9-ին Հունաստանի Խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունել է Ցեղասպանության ժխտումը քրեականացնող՝ «Այլատյացության դեմ պայքարի» օրինագիծը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում հրեաների, հայերի և Պոնտոսի հույների ցեղասպանության ժխտման համար: Նոյեմբերի 30-ին Բոլիվիայի Սենատի և Պատգամավորների պալատի կողմից ընդունվել է Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծ:

ՀՀ ԳԱԱ-ի փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտի կողմից 2013թ. անցկացված սոցհարցման արդյունքերը պարզել են, որ Թուրքիայում ուսանողության 33 տոկոսից ավելին ճանաչում է Հայոց ցեղասպանության փաստը:

Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիան անկախ Հայաստանի ստորագրել է 1993 թվականին: Այդ կոնվենցիայի 50-ամյակի առիթով 1998թ. ՄԱԿ-ի Ժնևյան գրասենյակում ընդունվեց ցեղասպանության մասին նոր բանաձև, որի նախաձեռնողն ու հեղինակը Հայաստանի Հանրապետությունն էր: Մարդու իրավունքների հանձնաժողովն ընդունել է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» բանաձևերը ոչ միայն 1998թ., այլև 1999-2001 թվականներին: Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 25 երկրի բանաձև կա, բայց Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Ռուսաստանի Դաշնության և ԵԺԿ-ի ընդունած բանաձևերում է նշված, որ հայ ժողովուրդը ցեղասպանվել է իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, ինչը շատ կարևոր է և ենթադրում է հատուցում, իսկ մյուս բանաձևերն այդ իմաստով խիստ թերի է:

Եվրոխորհրդարանը Թուրքիային կոչ էր անում օգտագործել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը՝ որպես հնարավորություն շարունակելու իր ջանքերը արխիվները բացելու, իր անցյալին առեևեսվելու ուղղությամբ, «ճանաչել Հայոց ցեղասպանությունը և դրանով հայ և թուրք ժողովուրդների իրական հաշտեցման ճանապարհը հարթել»,- ասված է ընդունված փաստաթղթում: «20-րդ

դարի պատմության մշակումը նախընթաց տասնամյակներում մեծ առաջընթաց է արձանագրել: Պատմական մեղսունակության ընդունումը հետևողական հաշտության նախապայման է: 2015թ. ապրիլի 23-ին Բեռլինի Մայր տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նվիրված արարողության ժամանակ Գերմանիայի նախագահը պաշտոնապես ընդունեց Հայոց ցեղասպանությունը ու նույնպես խոսել իր երկրի մեղսակցության մասին[3]:

Պատահական չէ, որ Գերմանիայի Դաշնության Խորհրդարանը 2016թ. հունիսի 2-ին գրեթե միաձայն ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևը: Բանաձևը, որը նվիրված է ինչպես Եղեռնի զոհերի հիշատակին, նպատակ ունի նպաստելու թուրքերի և հայերի միջև հաշտության կայացմանը: Հայոց ցեղասպանությունը 2015թ. մայիսին ճանաչեց Լյուքսենբուրգը, հունիսին՝ Բրազիլիան:

2015թ. ապրիլին տասնյակ երկրներում նահանգային ու քաղաքային մարմիններում ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բազմաթիվ հայտարարություններ ընդունեցին: Այսպիսով, ցեղասպանության գործընթացը նոր թափ է ստացել, որի հետ անհրաժեշտ է զուգակցել և ակտիվացնել պայքարը Եվրոդատարաններում՝ Թուրքիայի նկատմամբ պահանջատիրության և հատուցման հարցերի կապակցությամբ ստեղծելով դրա օրինական, պատմահիրավական փաստաթղթային բոլոր հիմքերը:

[3] Էդիկ Մինասյան, Հայաստան:

Հայոց ցեղասպանության թեմայի դասավանդման որոշ կարևոր շեշտադրումներ

Հայոց ցեղասպանության թեման դասավանդելիս մի քանի շեշտադրումներ օգտակար կլինեն թեման ավելի լավ յուրացնելու և որոշ հարցադրումների շուրջ խորհելու համար

1. Արևմտահայ քաղաքակրթությունը և նրա անկման գաղափարը

Անհարաժեշտ է աշակերտներին ներկայացնել դարասկզբի արևմտահայ քաղաքակրթությունը: Ցավոք, շատ հաճախ հայկական բնակավայրերի անունները Վան,Բիթլիս,Մուշ,Սասուն,Խարբերդ թեև շոյում են հայի ականջը, սակայն գնալով զրկվում են իրենդ բովանդակային իմաստից:

Ուստի անհրաժեշտ է.

ա/ավելի շատ օգտագործել արևմտահայ հասարակական ու մշակութային կյանքը ներկայացնողտեսանյութեր

բ/մշտապես պետք է ցուցադրել մինչև ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանի բնակավայրերի,հայ ընտանիքների, մարզական ակումբների,նվագախմբերի, կրթօջախների լուսանկարներ

գ/ինչպես նաև հայ ականավոր անհատների. ձեռներեցների, քաղաքական գործիչների գրողների, մտավորականների կենսագրություններ

Այս ամենը նոր բովանդակություն կհաղորդի ժամանակակիվ աշակերտի հայրենասիրության զգացմանը և կօգնի խորապես ընկալելու հայոց ցեղասպանության պատմությունը: Ներկայացնելով ժամանակի ուսյալ, առաջադեմ և քաղաքակիրթ հայ հասարակությանը ի հակադրություն հետամնաց և իր հարցերը բացառապես բռնի ուժով լուծող թուրքերի, մենք ցեղասպանության թեմային կմոտենանք մեկ այլ դիտանկյունից:

Հայոց ցեղասպանությունըայլևս չպետք է դիտվի սոսկ որպես մի ժողովրդի բնաջնջման պատմություն, այլ մի ողջ արևմտահայ քաղաքակրթության ոչնչացման պատմություն:

2. Զանգվածային մասնակցությունը և չարի առօրեականությունը

Շար հաճախ մարդկանց պատկերացումներում ցեղասպանություն կատարողներն ընկալվում են իբրև անմարդկային էակներ, հրեշներ։ Բացի այդ հայոց մտայնության մեյ դրոշմված է այն մտայնությունը, որ հայոց ցեղասպանությունն իրականացվեց բացառապես երեք թուրք փաշաների Թալեաի, Էնվերի և Ջեմալի ձեռքով։Այս կարծրատիպերը թույլ չեն տալիս հասկանալ «զանգվածային մասնակցության» երևույթը, ինչը շատ կարևոր է առհասարակ ցեղասպանությունների բովանդակությունը հասկանալու համար։

Զանգվածային կոտորածները իրականացվում են զանգվածայինմարդկանց միջոցով, որոնք ներգրավվելով սպանությունների գործընթացում, ի կատար են ածում քաղաքան վերնախավի կողմից մշակված ևտեղական իշխանությունների կողմից համակարգվող ծրագիրը։

Հասարակության տարբեր շերտերին ցեղասպանության իրականցման մեջ ներքաշելու համար հսկայական նախապատրաստական աշխատանք է կատարվում շարքային քաղաքացուց մոլեռանդ մարդասպան կերտելու համար։ Դա տեղի է ունենում թշնամու կերպարի ստեղծման, ինչպես նաև ատելություն սերմանող նոր գաղափարների մշակման և դրանք շրջանառության մեջ դնելու միջոցով։ Թուրքերը իրականացնելով ցեղասպանությունը նաև հնարավորություն էին ունենում հայերի ունեցվածքը կողոպտելու և նրանց բարիքներին տրանալու համար։

Այսպիսով, ստացվում է, որ ոճրագործները հասարակ մարդիկ են, ովքեր առօրյա կյանքում, հնարավոր է, որ մարդասպանի տպավորություն չթողեն։

Այս պարագայում օգտակար կլինի ներկայացնել 1961 թվականի Երուղսաղեմում նացիստ հանցագործ Ադոլֆ Այխմանի դատավարության այն դրվագը, երբ դատավարությունը ցնցող տվորություն է թողնում հրեա գիտնական Հաննա Արդենտի վրա։ Այխմանը հրեաների ոչնչացման գործի հիմնական կազմակերպիչն էր։ Հակառակ Արդենտի, Այխմանը ոչ թե հրեա էր, այլ սովորական, հասարակ գերմանացի, մի մարդասպան պաշտոնյա, ում համար ամենակարևորը իր առաջադրանքները հնարավորինս լավ կատարելն էր։ Ոչ մի հոգեկան կան հոգեբանական ախտանշան բժիշկները նրա մոտ չէին հայտնաբերել։ Այս փորձառություն Արդենտին թույլ տվեց խոսել Չարի առօրեականության մասին։

Դասարանում այս հարցի քննարկումը թույլ կտա ավելի խոր ընկալել մարդկային գործոնը զանգվածային հանցագործությունների ժամանակ, թույլ կտա ավելի զգոն լինել գաղափարների մշակման հարցում, ինչպես նաև փորձել պարզել, թե ինչպես ինքը՝ դպրոցականը, իրեն կդրսևորեր նման իրավիճակում։

3. Դիմադրություն և վերապրում

Շատերը պնդում են, թե ողբն այլևս հոգնեցրել է և բարդույթավորում է հայ երիտասարդ սերնդին։ Իրականում ցեղասպանության թեման իր մեջ դաստիարակչական մեծ լիցք պետք է պարունակի։ Անհրաժեշտ է հպարտորեն ընդգծել հայոց ցեղասպանության պատմության հերոսական դրվագները.

-բազմաթիվ տպավորիչ ինքնապաշտպանական կռիվները

-հրաշալի մշակված և իրականացված աննախադեպ «ՆԵՄԵՍԻՍ» գործողությունը

-մեծագույն հարգանքի արժանի ինքնազոհողության և հոգևոր դիմադրության /կրոնափոխությունից հրաժարվելու/ բազմաթիվ դեպքերը

Եվ ամենակարևոր ԽՈՐՀՈՒՐԴԸ.

Հպարտությամբ պետք է հիշել այն, որ հայ ժողովուրդը այս սարսափելի ողբերգությունից հետո կարողացավ վերագտնել ինքն իրեն և 20-րդ դարում երկու անգամ վերականգնել իր պետականությունը։ Պատմության այս փառապանծ հերոսական էջերը պետք է շեշտադրել և միլիոնավոր անմեղ զոհերի հանդեպ վիշտը զուգահեռել ազգի տոկունության ապացույցներով։

4. Համաշխարհային համատեքստ

Անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել մարդկային այլ ողբերգությունների՝ հոլոքոստի, կամբոջացիների, Ռուանդային թութսիների, իսլամադավան բոսնիացիների, հույների, գնչուների և այլ ողբերգությունների հետ, ցույց տալ ընդհանրությունները։ Այսպես հնարավոր կլինի ցեղասպանությունը դիտարկել ոչ թե որպես առանձին պատմական երևույթ, այլ որպես համամարդկային պատմության հիշողության մաս։ Այս համեմատությունը նաև թույլ կտա վերանալ ազգային բարդույթներից և այն ընկալել իբրև մարդկության դեմ իրականացվող հանցագործություն։ Դա նաև կբարձրացնի աշակերտների զգոնությունը, քանի որ

տեղեկանալով 20-րդ դարի ցեղասպանությունների մասին նրանք կհասկանան որ ցեղասպանությունների դեմ պայքարը պետք է լինի ամենօրյա աշխատանք նաև այսօր։

5. Ժամանակակիցների աչքերով

Հայոց ցեղասպանության պատմությունը մատուցելը առավել շահեկան կլինի, եթե այն ներկայացվի ժամանակակիցների թողած հիշողությունների համատեքստում, դիվանագետի, միսիոների, գրողի աչքերով, մարդասիրական կազմակերությունների գործունեության, հանգանակությունների դրվագներով, մամուլի անդրադարձներով և ցեղասպանությունը վերապրածների կյանքի պատմությամբ։

Այսպես ներկայացնելով նյութը դպրոցականը հնարավորություն կստանան զգալու ժամանակի շունչը, հասկանալու ժամանակի ընկալումները, ավելի լավ պատկերացնելու ժամանակ։

Օրինակ՝ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի հուշերը փայլուն կերպով ներկայացնում են երիտթուրքերի վերնախավի գործողությունների ողջ ընթացքը ներսից։

Կարելի է օգտագործել հատվածներ համաշխարհային մամուլից, օրինակ՝ «Նյու Յորք Թայմս»-ից։

Օգտակար կլինի նաև դասարանում դիտել գերմանական հեռուստաընկերության կողմից նկարահանված «Աղետ» ֆիլմը։ Մեկ ֆիլմի դիտումը ավելի տպավորիչ կդրաձնի թեման, քանի մի քանի հավելյալ դասախոսությունները։

Խորհուրդ է տրվում նաև ցուցադրել Արշալույս Մարտիկանյանի մասին պատմող ֆիլմը, որը եզակի պատմություն է նկարահանված այն տարիներին, երբ ցեղասպանությունը դեռ շարունակվում էր։

6. Մարդկային ճակատագրեր

Առաջարկվում է վերանալ մերկ թվերից։ Իհարկե 1,5 միլիոն զոհերի մասին պետք է անընդհատ խոսել, ցույց տալու համար աղետի զարհուրելի չափերը, սակայն պետք է նաև կենտրոնանալ առանձին մարդկային ճակատագրերի վրա։ Սա ավելի ազդեցիկ և

զգայական է դարձնում կատարվածը։ Դասարանում ներկայացնել տարբեր պատմություններ, որոնք թողել են իրենց հուշերում Մեծ Եղեռնից հրաշքով վերապրածները։

Օրինակ՝ Արշալույս (Ավրորա) Մարտիկանյանի պատմությունը, որն անցնելով բռնագաղթի զարհուրելի ճանապարհներով, դիմակայելով անմարդկային փորձությունների, հրաշքով փրկվում է կոտորածից և կարողանում է իր մեջ ուժ գտնել ու աշխարհին պատմել իր ժողովդր ողբերության մասին։ Նրա հուշերի հիման վրա գրվել է «Հոշոտված Հայաստան» գիրքը և նկարահանվել «Հոգիների աճուրդ» ֆիլմը։

Կամ Սարգիս Թորոսյանի պատմությունը, որտեղ հայազգի կապիտանը անձնվիրաբար կռվում է թուրքական բանակում, հաստատակամորեն կատարելով իր զինվորական պարտքը, մինչդեռ հենց այդ ժամանակ թուրքերը կոտորում են նրա ընտանիքը։

7. Քննարկումներ և վերլուծություններ

Թեման, իհարկե, զգայական է, այլ կերպ չի էլ կարող լինել։ Սակայն պետք է այն տեղափոխել վերլուծական, գիտակցական դաշտ։ Անհրաժեշտ է հարցեր նախապատրաստել դասարանում դրանց պատասխանները երեխաների հետ գտնելու համար։

Օրինակ՝

- Ո՞րտեղ մենք թերացանք,
- Ինչու՞ թույլ տվեցինք որ կատարվի այդ ողբերությունը,
- Ինչու՞ սխալվեց մեր վերնախավը,
- Ինչպե՞ս խուսափենք նման իրավիճակներից և այլն։

Այսպիսի հարցերի քննակումները երեխաներին լավագույնս կօգնեն խորությամբ ընկալելու ցեղասպանությունը։

Պետք է ներկայացնել նաև թուրքական ժխտողականների կարծիքները, որոնց դեմ աշակերտները պետք է կարողանան փաստարկված պատասխաններ գտնել։

Եվ վերջապես, պետք է կարևորել այս թեմայի ուսուցումը, միաժամանակ փորձելով աշակերտներին հեռու պահել դրա բացասական հոգեբանական ազդեցությունից,

առաջ մղելով հայ ժողովրդի տոկության և հերոսական վերապրումի ու պահանջատիրության զգացումները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կառավարության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության փաստը հիմնավորվել է, ճանաչվել ու հաստատվել ականատեսների վկայություններով, օրենքներով, բանաձևերով և բազմաթիվ նահանգների ու միջազգային կազմակերպությունների որոշումներով: Հայոց ցեղասպանությունն ընդունել են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի մի քանի հանձնաժողովներ, Եկեղեցիների համաշխարհային միությունը և այլն: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են շատ պետություններ.առաջինը Ուրուգվայը 1965թ.-ին: Հայ ժողովրդի կոտորածը պաշտոնապես ճանաչել են որպես ցեղասպանություն՝ ըստ միջազային իրավունքի՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Բելգիա, Լեհաստան և այլն:

Պատմությունը լռել չի կարող...

Օգտագործված գրականության ցանկ

- Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմությունը., Երևան., 2014., էջ 5:
- Մինասյան Է., Հայաստան (Армения):
- Հայոց Պատմություն, Հատոր IV, Գիրք Երկրորդ:
- Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976:
- Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Եր., 1989:
- Թառոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբներին, Եր., 1980:
- Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանություն, Փարիզ, 1934:
- Հայ ժողովրդի պատմություն հատ. 6 (ԳԱ հրատ), 1984:
- Համբարյան Ա., Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1898- 1908թթ), Եր., 1999:
- Համբարյան Ա., Հայկական կոտորածներ, Եր., 1980:
- Ղազարյան Հ., Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հատ. 2, Եր., 2004:
- Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջին, Եր., 1968:
- Պարսամյան Ա., Հայ ժողովրդի պատմություն (1801-1917) հատ. 3, Եր., 1967:
- Պողոսյան Կ. Գոյատևման պայքարի քառուղիներով, Եր., 1988:
- Нерсисян М., Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, Е., 1982.
-